

Պ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼՎԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.

ՍՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօր.

Վեցամսեայ 1.50 Տօր.

ՎԱՆՆԻԿ

ԵՄԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ի Ա Գ . Բ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Մ Կ Ա Ղ Ա Բ Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ՍՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ՆԻ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Iraounik»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ирауник»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ տրուիր

ՔԻՉ ՍԸ ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ

(Շար. Ասիւրի քիւն եւ վերջ)

Անցեալները ռուսահայ թերթերէն մէկուն մէջ հետեւեալը կարգացի. «Թիֆլիսի Դաշնակցական արհեստակցական միութիւնները ներկայացուցիչները 28 ձայնով ընդգէմ ճիւղումն են հետեւեալ բանաձեւը. «Դաշնակցական արհեստակցական միութիւնները ներկայացուցիչները թուով 34 հոգի, լսելով թիւ ու գէմ կարծիքներ թրքահայ դատի և Հ. Յ. Դաշնակցութիւնը երկու առանձին կուսակցութիւնների բաժնելու մասին և երկար քննութեան ենթարկելով այդ տարբեր կարծիքները, եկանք այն եզրակացութեան որ Հ. Յ. Դաշնակցութիւնն իբրեւ մի սոցիալիստական կուսակցութիւն պէտք է պաշտպան հանդիսանայ աշխատաւոր դասակարգի շահերին թէ՛ տաճկահայաստանում, թէ՛ այստեղ կողկասում և թէ՛ այն բոլոր տեղերում, ուր կայ հայ աշխատաւոր մասսա, միայն տեղի ու ժամանակի պահանջների համեմատ (ֆետերատիւ հիմունքներով աշխատանքի որոշ բաժանում մտցնելով գործունէութեան ու զեկալար մարմինների իրաւասութեան մէջ և ամենալայն տեղ տալով տաճկահայկական ընդհանուր ազատագրական շարժմանը, իբրեւ մարդկային բնական ու տարրական իրաւունքների ձգտող մի շարժման».

Ահա փաստ մը մեր կապկաբար օտարներուն նմանելու ու հետեւելու ծիծաղելի ճիգերուն. ըսել է մեր ռուսահայ եղբայրները

գեռ չեն կրցած լուրջ կերպով ռուսամասերել ոչ տաճկահայաստանը, ոչ տաճկահայուն վիճակը, ոչ տիրող պայմանները. և Հայաստանի փրկութեան գործն ալ ոչ թէ իրենց ազգային սեփական գործը կը նկատեն, այլ իբրեւ ընդհանուր մարդկային բնական ու տարրական իրաւունքների ձգտող մի շարժում... ուրեմն այն ազգայինները՝ որոնք կը դատապարտեն Հայաստանի փրկութեան գործի ղեկը ռուսահայ սոցիալիստներու և անիշխանականներու ձեռք յանձնուած ըլլալը, իրաւունք ունին... Նազարպէկը՝ սոցիալիստ մը, սոցիալիզմով սկսաւ ու սոցիալիստ յեղափոխականներու ծրագրով և ուղղութեամբ ընթացաւ. Բրիտտափորը իբր անիշխանական՝ անիշխանական ցոյցերու աւելի ուժ տուաւ և ամէն մէկ անհետեւանք ու աննպատակ ցոյցերու համար հազարաւոր ֆրանքներ ծախսեց. միմիայն մահափործի մը համար միլիոններ ծախսուեցաւ. մինչդեռ այդ գերամներով ու այդքան ռազմամթերքներով ու գործիքներով երկրին մէջ ինչե՛ր չէին ըլլար. նոյն իսկ նպաստաւոր կեդրոն մը գրաւել կարելի էր ու առժամեայ կառավարութիւն մը հաստատելով՝ երկար ատեն ապստամբութեան մէջ պահել Այսպէս ըրին դեռ երէկ թուրքին լուծէն տղատուող փոքր ազգերը. բայց մեր վարիչները փոխանակ անոնց շաւղին հետեւելու, սոցիալիստական ու անիշխանական ճամբան բռնեցին և իրենց կամքը առաջ տանելու համար՝ մահով սպառնալիքով իրենց հետեւողները այդ սխալ ճամբուն մէջ մղեցին. և Հայաստանի փրկութեան գործը համամարդկային զաղափարներու հետ չփոթելով հայ դատին շուրջը կատարեալ թոհ ու բոհ սանգիցին, և շատեր ալ ռուս յեղափոխականներու հետ միացած գործելով՝ ռուս կառավարութեան զայրոյթը աւելի սաստկացուցին Հայերուս դէմ, փոխանակ մեղմացնել ջանալով տակաւ առ տակաւ հայ

դատին նկատմամբ նպատաւոր գիրքի մը մէջ դնելու զայն. Ամենէն հզօր պետութիւններն իսկ Ռուսիոյ հետ բարեկամանալ կաշխատին այսօր. մեր ինչե՛րն ապաւինելով հզօր կառավարութեան մը հետ չափուելու կեցանք. Մենք խեղճ, անզօր ու անպաշտպան ազգ մենք սոցիալիստ, անիշխանական կամ յեղափոխական, ինչ որ ալ ըլլանք դարձեալ հայ ենք օտարին համար, և մեր մէկ անհատին վրէժը ընդհանուր հայ ցեղէն լուծել կաշխատի օտարը. ասոր համար է որ ամեն տեղ կը հալածեն ու կատեն զմեզ, որովհետեւ անպաշտպան ենք, ուստի Ռուսիոյ պէս հզօր պաշտպանի մը պէտք ունինք. և անոր շնորհիւ պիտի կրնանք ոչ միայն Ռուսիոյ մէջ, այլ թուրքիոյ և Պարսկաստանի մէջ ամենայն ապահովութեամբ նուիրուիլ մեր նիւթական ու բարոյական զարգացման ու բարգաւաճման, որոց համար եւրոպական ազգերը ամեն տեսակ միջոցներու կը դիմեն, մինչդեռ մեր սոցիալիստ կապիկները միմիայն նմանելու համար և կամ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու և իրենց կաշին ապրեցնելու համար, խեղճ հայ գործաւորները գործադուլի կը ստիպեն, և այդպէսով հազարաւոր աղքատ գործաւորներու անգործ մնալուն և թշուառանալուն պատճառ կըլլան. Այո՛, եւրոպայի մէջ գործադուլ կրնեն, բայց մինչեւ որ գոհացում չստանան ոչ մէկ գործաւոր գործի ձեռք չի զարներ, մինչդեռ Ռուսիոյ մէջ հայը գործադուլ կրնէ. թուրքը ու վրացին անմիջապէս գործի կը մտնեն, որով միմիայն հայը կը տուժէ ու հայը կը թշուառանայ. Պէտք չէ՞ որ տեղական պայմանները նկատողութեան առնելով զգուշանան իրենց արիւնակիցները զոհելէ. բայց մենք հայերս անպատճառ պէտք է բացառութիւն կազմենք, ու մեր նոր սովորած սովորչութիւնը մեր արիւնակիցներուն վրայ փորձենք. ու մեր անփորձ ածելիին տակ կտոր կտոր րնենք մեր

եղբայրները, ինչո՞ւ չենք յաշուել որ ինչ ազգերը գործադուլի համոզելու և կամ ինչո՞ւ չենք յաշուել որ ինչ ազգի պարժուանները սպաննելու և հազիւ մատի վրայ համրուող դրամատէրներ, ունինք, զանոնք կը հալածենք ու զանոնք ոչնչացնելու կաշխատինք... որպէսզի միմիայն գործաւոր դասակարգը մնալով՝ քննունտուն հաւասարինք. Հայը ի՞նչ պէտք ունի սոցիալիստ կամ անարշիստ ըլլալու և կամ ռուս յեղափոխականներու ձեռք գործիք գառնալու. միթէ ապագային ատոնցմէ բարիք կամ պաշտպանութիւն վայելելու՞ համար. ընդհակառակը ռուս կառավարութիւնը այնքան հզօր միջոցներ ունի որ, ո՞չ միայն ընդհանուր աշխարհի ատելի կարող է ընել հայերը, այլ նոյն իսկ մեր յոյսերնիս դրած ռուս յեղափոխականներուն ու ազատականներուն յիսկ հալածել կուտայ զմեզ, և այսօր Ռուսիոյ ձայնը ոչ միայն եւրոպական արքունիքներու մէջ մեծ կշիռ ունի, այլ թուրքիոյ և Պարսկաստանի մէջ դեռ մեծ ազդեցութիւն ու հայկական դատին մէջ ալ մեծ հեղինակութիւն. Ռուսի միշտ օտարը չանիծենք, այլ քիչ մը մենք զմեզ քննենք և ուղղենք.

ԻՐԱԶԵԿ

ՏԵՂԱԿԱՆ


Ուրախ ենք յայտարարելու թէ տեղւոյս Պատ. Թաղ. Դորհուրդը չը յամառելով իր հրաժարականին վրայ, հաւանած է շարունակել իր պաշտօնը ըստ խնդրանաց շատերու. Միայն փափաքելի է որ թաղականութեան այն մէկ քանի անդամները՝ որոնք թոյլ ու անապրբեր կը վարուին իրենց պաշտօնին կիւրառութեան մէջ, քիչ մը եղանդ և հոգածութիւն ցոյց տան գէթ ասկէ յետոյ, որպէսզի իրենց ընկերներուն ալ վհատում չը պատճառեն և գործը միացեալ ջանքերով առաջ մղուի:

նիւթէն պարզ բաներու վրայ խօսելու եւ ժողովուրդը հոս բռնելու: «Այստեղ զգարաց է եւ կրնամ խօսել զպրոցական խնդրին վրայ» եղաւ պատասխանը: Այսպէս խօսելու անուանով խօսողներ իրենց հազարավոր խօսքի տղապատելունը կապտել կուզեն:

Ներկայ հանդիսականները որոնք զեւ չէին մոռցած 9 տարի առաջուան նոյն օրուան կոտորածը, սրտագոյշ, մանաւանդ կրնան ու տղաքներ խուռն բազմութեամբ սրահէն դուրս խուժեցին եւ մեր վարդապետը աղուոր հանդէսը որ կոչուած է օտարութեան մէջ ցրուած հայութեան բեկորներն իրարու կից պահելու, միջոց դարձաւ իրարու դէմ ունեցած ատելութիւններու աւելի հրահրելու:

Երեսներն ճերմակ կուսակցական պարտներուն, Ազգ. վարժարանին յառաջագիւղ վրձնակ իրենց աչքին փուշ էր բայց առանկ կոխներով չէ որ պիտի արգիլեն անոր յառաջադիմութիւնը:

ՕՍՄԱՆ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՏՈՆԱՆԵՐԸ

(Շար. Ասխուր Բիւնե)

Յօդ. 39. — Պետական զանազան պաշտօններուն անուանումը կը կատարուի պահանջուած արժանիքներու եւ կարողութեան պայմանները որոշող կանոնադրութեան համաձայն: Այդ պայմաններուն համապատասխան պաշտօնեայ մը չի կրնար պաշտօնակի ըլլալ կամ փոխուիլ, եթէ իր պաշտօնակիութիւնն արդարացող բաւականաչափ փաստեր չկան, եթէ ինքն իսկ հրաժարական չի տար, կամ, մանաւանդ, եթէ իր պաշտօնակիութիւնը անհրաժեշտ չի դատուիլ կառավարութեան կողմէ: Այն պաշտօնատարները, որոնք բարեօք ծառայութեան եւ պարկեշտութեան փորձեր կուտան, ինչպէս նաեւ անոնք, որոնց պաշտօնէ հեռանալը անհրաժեշտ կը դատուի կառավարութեան կողմէ, ատենք առանձին կանոնադրութեամբ որոշելի օրէնքներու համաձայն, իրաւունք ունին պաշտօնի բարձրացման կամ հան-

գտեան թոշակի եւ կամ պաշտօնէ հեռացման թոշակի:

Յօդ. 40. — Բոլոր պաշտօնատարներու պարտականութիւնները պիտի սահմանուին յատուկ կանոնադրութեամբ: Ամէն պաշտօնեայ իր պարտականութեան շրջանակին մէջ պատասխանատու է:

Յօդ. 41. — Ամեն պաշտօնեայ պարտաւոր է յարգելու իր մեծի, բայց օրէնքի գծած սահմաններէն դուրս անոր հրամաններուն հնազանդելու պարտական չէ: Նոյնիսկ մեծին հնազանդելով օրինացանց գտնուող պաշտօնեան պատասխանատուութենէ ազատ չէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 42. — Ընդհանուր ժողովը կը բաղկանայ երկու ժողովներէ: Աւագներու ժողովէն կամ Մերակոյտէն եւ Պատգամաւորական ժողովէն:

Յօդ. 43. — Ամեն տարի այս երկու ժողովները կը գումարուին նոյնմեքի սկիզբը եւ կը փակուին յաջորդ մարտ 1ին: Թէ քացումը եւ թէ փակումը տեղի կուենայ կայսերական իրազէով: Երկու ժողովներէն եւ ոչ մէկը կրնայ միւսին գումարման ժամանակաշրջանէն դուրս նիստ կայացնել:

Յօդ. 44. — Վեհափառ Սուլթանը կարող է ի պահանջով հարկին, երկարեւ կամ կարճել ժողովներու նստաշրջանը:

Յօդ. 45. — Բացման հանդէսը կը կատարուի կամ վեհ. Սուլթանին եւ կամ փոխարորդաբար Մեծ-Եպարզօսին կողմէ, նախարարներու եւ երկու ժողովներու ներկայութեամբ: Կայսերական ճառը կը չոյսփէ կայսրութեան անցեալ ատուան ներքին կացութիւնն ու արտաքին յարաբերութիւններու վիճակը եւ յաջորդ տարուան համար հարկաւոր դատուած կարգադրութիւնները մատնամիջ կընէ:

Յօդ. 46. — Ընդհանուր ժողովի բոլոր անդամները երդում կընեն հաւատարմութիւն ընդդէմ Վեհ. Սուլթանին, Հայրենիքին եւ Սահմանադրութեան: Նորընտրի անդամներուն երդումը կը կատարուի ժողովի բացման ժամանակ, Մեծ-Եպարզօսին առաջ, իսկ բացման ներկայ չեղողներուն՝ ժողովի նախագահին եւ անդամներուն առաջ:

Յօդ. 47. — Ընդհանուր ժողովի անդամներն իրենց կարծիքը յայտնելու

կամ քուէն տալու կատարեալ ազատութիւն ունին. անոնց եւ ոչ մէկը կրնայ հրահանգներով եւ կամ խռովութեամբ կապուիլ, ոչ ալ սպառնալիքներու ազդեցութեան տակ գործել: Նոյնպէս չի կրնար դատի կամ պատասխանատուութեան ենթարկուիլ ժողովին մէջ յայտնած իր կարծիքին համար, եթէ մեղադրուած չէ ժողովին ներքին կանոնադրութեան դէմ: Այս վերջին պարագային մէջ անոր վրայ գործ կը գրուին կանոնադրութեան տրամադրութիւնները:

Յօդ. 49. — Երբ Ընդհանուր ժողովի անդամներէն մէկը իր պատկանած ժողովին երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբ կամբաստանուի իրր դաւաճան Սահմանադրութեան զեղծող, կամ կաշառակեր, եւ կամ երբ օրէնքով կը դատապարտուի բանտարկութեան կամ աքսորի՝ իր անդամութեան պաշտօնէն կը զրկուի: Դատաստանն ու պատժի գործադրութիւնը կը վերաբերի ձեռնհաս ատենին:

Յօդ. 49. — Ընդհանուր ժողովի իւրաքանչիւր անդամը պարտաւոր է քուէն անձամբ տալ. իրաւունք ունի եւ քուէարկութեան ժամանակ ձեռնպահ մնալու:

Յօդ. 50. — Չէ կարելի երկու ժողովներու միաժամանակ անգամ ըլլալ:

Յօդ. 51. — Մինչեւ որ ժողովականներու կէսէն աւելին ներկայ չըլլայ, եւ ոչ մէկը կրնայ նիստ գումարել: Ամեն որոշում կը տրուի քուէներու բացարձակ մեծամասնութեամբ, բացի այն դէպքէն, երբ կը պահանջուի քուէներու երկու երրորդի մեծամասնութիւնը: Երբ քուէները հաւասար են, նախագահին քուէն երկու ձայն կը սեպուի:

Յօդ. 52. — Անձնական դործերու համար ժողովներէն մէկին կամ միւսին տրուած խնդրագիրը կը մերժուի այն ժամանակ, երբ կըստուգուի որ խնդրամատոյցը նախ չէ դիմած ձեռնհաս պաշտօնատուին եւ կամ այն իշխանութեան, ուրկէ ուղղակի կախում ունի այդ պաշտօնատուին:

Յօդ. 53. — Օրէնքի մը հաստատման կամ փոփոխութեան առաջարկը նախարարներուն կը վերաբերի: Մերակուսականներն ու պատգամաւորներն ալ կրնան սակայն, իրանց իրաւասութեան սահմաններուն մէջ, նոյն առաջարկներն ընել: Այս վերջին պարա-

գային, առաջարկը Մեծ-Եպարզօսին կողմէ կը ներկայացուի վեհ. Սուլթանին, որ եթէ յարմար դատէ, իրատէով կը յանձնէ Պետական Խորհուրդին, որպէս զի ձեռնհաս պաշտօնատուներէն ստացած բացարձակութիւններուն եւ ցուցումներուն համաձայն առաջարկուած օրէնքի նախագիծը պատրաստէ:

Յօդ. 54. — Պետական Խորհուրդին պատրաստած օրինագիծը՝ նախ Պատգամաւորներու ժողովին եւ յետոյ Մերակոյտին քննութեանն ու քուէարկութեանը կենթարկուի: Օրինագիծը գործադրութեան կը դրուի, երբ երկու ժողովներէն կրնաւորուի եւ կայսերական իրաւէով կը վաւերացուի Ներկու ժողովներէն մէկին կողմէ: Վերջնականապէս մերժուած օրինագիծ մը չի կրնար նոյն ժողովին քննութեան ենթարկուիլ, նոյն նստաշրջանին:

Յօդ. 55. — Օրինագիծ մը ընդունուած կը համարուի միայն այն ժամանակ, երբ երկու ժողովները զայն կը քուէարկեն ձայներու մեծամասնութեամբ, յօդուած առ յօդուած, եւ յետոյ իր ամբողջութեան մէջ:


Յօդ. 56. — Բացի նախարարներէն եւ անոնց փոխանորդներէն, ինչպէս եւ պաշտօնապէս հրաւիրուած պաշտօնատարներէն, ոչ ոք կրնայ մէկ կամ միւս ժողովին սրահ մտնել, եթէ նոյնիսկ իր եւ կամ հասարակութեան մը կողմէ խնդրագիր մատուցանելու կամ զենկուցում ընելու համար եկած ըլլայ:

Յօդ. 57. — Ժողովներու խորհրդակցութիւններն ու վիճաբանութիւնները կը կատարուին թուրքերէն: Օրէնքները կը տպուին եւ անգամներուն կը բաժնուին վիճաբանութեան օրէն առաջ:

Յօդ. 58. — Գուէարկութիւնը կը կատարուի կամ անուններու կոչումով կամ ձեռնամարմն եւ կամ գաղտնի: Գաղտնի քուէարկութիւնը կը կատարուի ժողովականներու մեծամասնութեան պահանջով:

Յօդ. — 59. — Իւրաքանչիւր ժողով կը կառավարուի իր նախագահին սիթոցով եւ ներքին կանոնադրութեան համաձայն:

(Շարունակելի)



բու մը մէջ նետուած է: Ես ալ աղէկ չեմ գիտեր ի՞նչ բան է որ զիս կապած է այս վաղանցուկ կեանքին ու ի՞նչու համար կը թափառիմ: Երբեմն բանտը, թիարանն ու քսորավայրերը կերթամ... Երբեմն ալ մարդերու հոյակապ ապարանքն, ու յետին ազգայնական խրճիթը կը մտնեմ: Անօթի՝ թէ ծարաւ եմ... ատիկա փոյթս չէ: Ահա իմ կեանքս:

Ազնուասիրտ կինը չը կրցաւ հանդուրժել... հոգին խշխշաց ու աչքերը լեցուեցան տաք արցունքով մը:

— Ո՛հ, բաբի ծերունի, արդեօք որ չափ թշուառ դրութեան մէջ ինկած էր ամուսինս, մրմնջեց ան՝ հառաչելով:

— Միթո՞ւրուեցէք... Աստուած մարդուս մոռլլ թշուառութեան ետին միշտ երջանկութիւն մը պահած է: Երբ այդ երջանկութիւնը կուենեաք, ան ատեն կը մոռնաք անցեալն իր բովանդակ երեւութիւնով:

— Ախ, ապկից երբեք կարելի է երջանկութիւն սպասել:

— Ի՞նչպէս, չէ՞, կը հաւատաք թէ Աստուած գիտէ:

— Կը հաւատամ... բայց...

— Երբ կը հաւատաք, ուրեմն գիտցէք թէ Ան ձեր վիճակը կը տեսնէ ու ձեր ձայնը կը լսէ:

Ողորմիկ կինը սարսափ ու լեզուն յառաջ չը գնայ որ առարկութիւն մը ընէր:

— Աւագակապեալ ծոցէն հանեց ծերար մը ու ըսաւ.

— Առէ՛ք այս աւանդը, խաթուն, ձեր ամուսինը տուաւ ինծի: Բայց ներեցէ՛ք որ տարի մը ետքը կը յանձնեմ... Ի՞նչ ընեմ... անանկ եղաւ:

Կինն դողդալով առաւ ծրարն ու բացաւ: Երբ ոսկինները տեսաւ, յանկարծ մեռելի մը գոյնը պատեց իր կերպարանքը... անդին վեր ցատկեց ու գոչեց.

— Աստուծոյ սիրոյն ըլլայ... չուտ չուտ առէ՛ք այս ծրարն ու հեռացէ՛ք, եթէ չէք ուզեր զաւակներուս արիւնը մտնել: Չէ՛, չէ... պէտք չեն ինծի ատենք... Ես նախամեծար կը համարեմ այնոց տղաները ծառայել, քան երբեք արանկ դպրապետութեան մը զօհ դառնալ: Տաքե՛ք, չեմ ուզեք... Երբ պարտաւոր եմ, Երբ ձեռքս կապուած է, Երբ ձեռքս կապուած է, Երբ ձեռքս կապուած է, Երբ ձեռքս կապուած է...

— Կեցէ՛ք, խաթուն ի՞նչ կըսէք, ընդհատեց Աւագակապեալը: Բացատրեցէ՛ք թէ ի՞նչ պատճառաւ չէք ըն, գիտե՞իք ձեր ամուսնոյն յանձնած աւանդը:

— Երբեք, երբեք... ատիկա ամուսնոյս չը պատկանի... անիկա ուսկի՞ց առած կրնայ ըլլալ այնքան խոշոր գումար մը: Ախ, վաստակ ընելու չէր գացեր... անիկա քսորական մըն է: Գիտե՛մ, գիտե՛մ... արիւնով ներկուած են ոսկինքը... Գարշնի ռճի մը կը հոտի անոնցմէ... հետեւաբար ես մեղսակից չեմ կրնար ըլլալ ատանկ նենգալի չարագործութեան մը:

Աւագակապեալը դողն ժպիտ մը պատկերացուց իր բարութեան ու զրթութեան եղեւորթով ծաղկուած չորթութեան վրայ եւ դողդալով ըսաւ.

— Կը խաբուիք, սիրելի խաթունս, այս ոսկիները ոչ արիւնով ներկուած են, եւ ոչ ալ ռճի մը կը հոտի անոնցմէ: Անոնք ձեր ամուսնոյն արդար վատակներով դիզուած են: Փուճ տեղ կանարգէ՛ք զիս: Չէ՛ք նայիր: Ի՞նչ կրնամ սպասել ձեռքէ, ի՞նչ դատադրութեան մը զօհ ընել կուզեմ ձեր ըն-

տանիքը: Ախ, այո, դուք ալ իրաւունք ունիք... պէտք էր անկից գործութիւն մը առնել, որպէսզի ատանկ երկիւղ մը չը պատճառէի ձեզ:

— Անօգուտ է... ինչ որ ալ ըսէք, դարձեալ չէք կրնար համոզել զիս: Կըսեմ թէ այդ ոսկիները արիւն ու ռճի կը հոտին, որովհետեւ հարուստ ու ազդեցիկ թուրքի մը ապարանքէն գողցուած են, եւ ատենց պատճառաւ սպաննուած է այդ մարդը... Ո՛հ, դեռ երեկ էր երկու ոստիկաններ տունս եկան ու հարցաքննութեան ենթարկեցին զիս: Այլ ի՞նչ ըսեմ... ինչ կըրպով հասկցնեմ ձեզի: Ելէ՛ք, կը պաղատեմ, ելէ՛ք... չուտով հեռացէ՛ք այս աղքատիկ խրճիթէն... անոր սեմերէն ներս սեւ օձ մը միտցունէ՛ք: Գիթացէ՛ք թշուառութեան վրայ... ու ի՞նչ գիտաւորութեամբ որ ատանկ դաւ մը լարել կուզէք, նորէն ետ կեցէ՛ք: Չէ՛ որ վերը Աստուած կայ... չէ որ դուք ալ խիղճ ունիք...:

(Շարունակելի)

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Ամերիկայի մէջ «Իրաւունք»-ի գործակալութիւնը ստանձնած է Տիար Մ. Գ. Սուգիկեան որուն միջոցաւ ևս կարելի է բաժանորդագրուիլ:

Հասցեն՝

Մ. Գ. ՍՈՒԳԻԿԵԱՆ

18 Տիբա բլաւ Պոսթօն սէս

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻԿԱ

Սթանպօլտաքի Ալմանիա էլ-չիսի Պառն Մարչալ սուհը ումուհի գօնֆերանսը իշխն Լա-Հէյէ մուրախաս նասպ օլընմուշ տըր:

— Պիր թագըմ ինկիլիզ վէ Ֆրանսըզ պանքէրլէրի պէյնինտէ հասըլ օլան եէնի պիր իթիւաֆ իւզըն՝ ճէսիմ պիր պանգա թէէ-սիս օլընաճագ վէ պու պանգա Շարգտա վէ Մարտա մուամէլէտէ պուլընաճագ օլտըզը կիպի պաշ-լըճա թիւրքիտա թիճարէթլէ մէշըուլ օլաճագ տըր: Պու իշտէ ալմանլար րահաթսըզ օլիյորլար զիրա պու եէնի թէսիսաթ թիւրքիտա Ֆրանսըզ վէ ինկիլիզ թէսիթիթի արթըրմայա խըտ-մէթ իտէճէք տիր:

— Պապը Ալինին ալտըզը մա-լիւմաթ իւզըն, էրմէնի տաիրէ-լէրինտէ Լա-Հէյ գօնֆերանսընա էրմէնի մէսէլէսի իշխն՝ պիր պէյաննամէ կէօնտէրմէք էֆքեա-րը ճէրէան իտէր իմիշ: Բէզա կէնճ թիւրքլէր այնը պիր միւ-րաճաթտա պուլընաճագ ըմըշ-լար:

— Պուլկարիտաքի մաքէթո-նիւլը մուհաճիրլէր Մ. Ամերիկա ճումհուրիյէթ ղէյիսի Մ. Բօզ-վէլթէ պիր պէյաննամէ եօլլա-յուպ, իլէրտէքի Լա-Հէյ սուլհ գօնֆերանսընտա Մաքէթոնիա մէ սէլէսիթի տալի հալընը մէվ-զուի պահաս գօնուլմասընը ղէ-ճա իթտիլէր:

— Պապը Ալիտէ չայի օլտըզը-նա նազարէն, Ալմանիա տէօլլէ-թի Եունան հիւքիւմէթիտէն Գօրֆու առասընը ալմագ իշխն միւզէքէրէտէ իմիշ: Ալմանիա պու առայը էլէ կէչիթուպտէ Շար-գտա պիր պահիրլէ մէքէչիլիէ սահիպ օլմագ իսթէյօր:

— Մէքթէպի Սուլթանիէնին եանկընընտան հիշ պիր շէյ գուր-թարամմըշլար: Չակիրտլէր բալ-թօլարընը վէ քիթապլարընը ալմամըշլար: Ֆագաթ ինսան թէլէֆիաթը օլմամըշ տըր:

— Սուլթան Բումանիա գրալի-ցասընա մուրասսա Շէֆագաթ նիշանը վէ սէնաի մէտալիօնը ինտա էյլէտի:

— Գասթօրիա գազասընտա Տօ-մաթէս նամ մահէլտէ 10 քիշի-

լիք պիր պուլկար չէթասը մու-հասէրէ օլունտու չէթա ղէյիսի Միթրէ վէ 3 քօմիթէ էօլտիլէր: տիկէրլէրի գաշտըլար: ասքէր-լէրտէն 30 քիշի եարէլէնսիշ օլ-տըզը եազըլիյօր իսէտց էօլէնլէ-րին մըգտարը պիլտիթիլմէյօր:

— Գումանօվա գազասընտա պիր սըրպ չէթասընըն միւսատէմէ-սինտէն տօլայր 100 գատար սըրպլար թէլգըֆ օլտուլար:

— Բարիս թիւրք էլչիսի Միւ-նիւր բաշա Սուլթանտան պիր մուրասսա Շէֆագաթ նիշանը գը-րալ Բէթր վաճէթասը իլէ Բրէն-սէս էլէնայա թագտիմ իթտի:

— Սուլթան տույմուշ քի րոււմ բաթրիգի բաթրիքհանէյի պիր էճնէպի տէվլէթին հիմայէսի ալթընա գօյմայա չալըշիյօր ա-նը հուզուրընա չազըրմըշ վէ օ' խուսուստա իսթարաթ իթմիշ տիր:

— Մ. Ամերիկա էլչիսի՝ էրմէ-նիտանտաքի ամերիկա մէք-թէպլէրի իշխն՝ թիւրք հիւքիւ-մէթին իթտիլի վատլարըն իճ-րասընը պէքլէմէքտէ տիր: Կէօմ-րիւկլէրին 100տէ 3 զամմը մէսէ-լէսինտէ իսէ՝ Մ. Ամերիկա էլ-չիսի՝ էլթորա տէվլէթլէրի գա-պուլ իթսէլէր տալի՝ քէնտիսի գապուլ իթմէյէճէք տիր: Թաքի մուալլագտա օլան 14 մէսէլէլէր հալլ ու ֆասլ օլընանա գատար:

ՏԱԽԻԼԻԷ

Վիւքէլա ղէյիսի միւթէվէֆա Բէթրօլըն ճէնազէ ալայը վէ տէֆնի հիւքըմէթին մէսարիֆի իլէ իճրա օլունտու 700տէն զի-յատէ գուրօնա կէօնտէրիլմիշ իտի: հազըր էհալի 10,000 քիշիտէն ֆազլա ըտը: Նարօտնեագլարտան մատա պիւթիւն տիկէր բար-թիլէրին ղէյիսլէրի ճէնազէ ղէս-մինէ իշթիրագ իթտիլէր: Միւ-թէվէֆանըզ քեազըտլարը իշին-տէն վուրուլմասընտան պիր գաշ կիւն էվլէլ եազմըշ օլան չու մա-ալտա պիր քեազըտ պուլունմուշ: «Շու կիւնլէրտէ հէրհալտէ գաթլ օլընաճազըմ: պէնի Սթանպօլ-վըն վէ Կրէքուլըն արասընա տէֆն իթսինլէր վէ պէնիլ թապուտու-մըն էթրաֆընտա ալա թանթա-նա վէ չաշաա օլմասըն:»

• •

Գաթիլ իլք իսթինթագընտա կէօնա գահրամանլըզ իճրա իթ-միշ կիպի մազրուրըզլէ «քիմ-սէնին թէչլիքի վէ եարտըմը օլմագսըզըն պէն էօլտիւրտիւմ տէմիշ իտի իսէտէ, սօն իսթին-թագլարընտան խայլը էսրարլար վէ շէրիքի ճինայէթլէր մէյտա-նա չըգմայա պաշլամըշ տըր: պու սէպէպլէ չօք քիշիլէր տէրտէսթ օլունմուշ վէ պիր թագըմլարը թէվգըֆ օլունմուշ տըրլար: Պուն-լարտան էն ղիյատէ մազնուն օ'

լան «Պալգանդա թրիպունա» կազէթասընըն տիրէթօրու Մ. Իքօնօմօլ տըր: պու առամ 1897տէ Վառնա նաշալնիկի օլուպ 98տէ այնը մէմուրիլէթլէ Բուշուլա թային օլունմուշ ըտը: Միւս-թանթիգ պունուն շէրիքի ճի-նայէթ օլմասընա տայիր տէլիլ-լէր էլտէ իթմիշ: Գաթիլ իսէ Բէթրօլ իսթինտէ վէ թիւրք վա-լիտէտէն սօզմուշ պիր անարշիսթ իմիշ վէ պէյիւք պիր զաթ էօլ-տիւրմէք ֆիքըրի իլէ Սօֆիայա կէլուպ Իքօնօմօլ իլէ տօսթ օլ-մուշ:

— Ֆէխամ. Բրէնս Ֆէրտինանտ հազրէթլէրի Սօֆիայա վասըլ օլ-ուպ ճումա կիւնիւ մուվագգաթ վիւքէլա ղէյիսի Մ. Սթանչէվի հուզուրընա գապուլ իտէրէք, մէ-մալիքին աշվալը հազըրէսի իւ-զէրինէ թաֆսիլաթ ալտըլար: Պիլ ախէրէ Բրէնսին պիր ու-քազը իլէ Սօպրանիյէ ղէյիսի Մ. Կուտէվ վիւքէլա ղէյիսի նասպ օլունտու, վէ պու սուրէթլէ Բս-թանպօլիսթ բարթիտաթ թէքրար գուվլէթտէ գալմըշ օլտու:

— Միւթէվէֆա Բէթրօլըն տէֆնինտէն սօնրա Ֆէխա Բրէնս պիւզաթ մէգարիսթանա կիտուպ, Բարիստէն մախսուս կէթիրմիշ օլտուրու պուքէթի Բէթրօլըն մէգարընա գօյտու: Միւթէվէֆա վաթանէրվէր պիր տիւլումաթ օլմագտան ղիլատէ, գահրաման պիր ճէքիլի օլմուշ տըր: անըն սէրկիւզէլթիտէն ղէք էհէմի-յէթլի նօթալարը իլէրքի նօմէ-րօմազտա տէրճ իտէճէյիք:

ՐՈՒՍԻԱ

Տումանըն մէճիլսինէ թախսիս օլընան Տալրիտ սալօնըն թափա-նը սապաշ սաաթ ճտա տիւշտիւ պու գազա պինանըն ֆէնա եա-բըլմասընտան զուհուր իթտի, մէպուսլարա մախսուս 200 սան-տալիալար գըրըլտըլար: Եկէր մէճիլս վագթընտա եըգըլսա ըտը 200տէն ղիյատէ մէպուսլար թէ-լէֆ օլաճագլար ըտը:

Մէճիլս սալօնըն քէմէրի թամիր օլանա գատար պիր տի-կէր սալօնտա թօբլանտըլար: Բէք վէլլէլէլի պիր մէճիլս օլմուշ տըր: Պիր սօսիալիստ մէպուս «հիւքիւ-մէթ բարթիսի թարաֆընտան տիկէր բարթիլէրէ պիր տէք թէրթիպ օլունմուշ տըր» տէմէ-սինտէ վէլլէլէ քէք գապարտը: Մարտ 20սինէ գատար Տումա մէճ-լիս իթմէյէճէք:

— Մօսկուտա պիր բօլիսին գաթիլսինտէն տօլայը մահէմէ 3 տարիլիֆինուն թալէպէլէրի վէ պիր մէմուրը էօլիւմէ մահէրիւմ իթտի: վէ հիւք իճրա օլունտու:

— Լօցտա ասքէր գօմանտանը էմր իթմիշ տիր քի սօգազլարտա գարագօլա թէսատիւֆ իտէնլէր էլլէրինի ճէպլէրինտէն չըգարա-ճագլար: Ջիրա ճէպտէն ղէվօլ-վէր վէ պօմպա չըգարուպ բօլիս վէ գազալարը էօլտիւրիյօրլար:

ՏՕՔԹ. Ն. ՍՕԹԻՐՕՑ

Վիւաքոյժ-Մանկաքառճ

Վառնա Մ. Կուիզա փողոց թիւ 8
(Ջինուրական քիւպին մօտ)

Այս անգամ Բարիզէն վերագար-ճած ըլլալով, հիւանդ կընդունի ամեն օր ժամը 2—4:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ. 24 փետրուար

ՋԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՑ

Վալօն 100 քիլօ. 1220/13-80
Արապա 52-58 լիպ. 7.50/1940

ԱՐԲԱ

Վալօն 100 քիլօ 1240/12-80
Արապա 42-47 լիպ. 6-80/7-

ԵՈՒԼԱՑ արապա 33/36 լպ. 5/60.6

» 100 քիլօ 13-13-40

ՋԱՎՏԱՐ արապա 52/57 լիպ 7.60/8

ՖԱՍՈՒԼԵԱ արապա 100 քիլ 12/21

ԲԱՐԻՑԱ. 100 քիլօ — Եօգ

Արապա 100 քիլօ Եօգ

ՏԱՐԸ տրապա 7. 7/20

ԲՈԼՈՉ արապա 55-60 լպ. 12. 14.

ՄԻՍԻՐ 57-58 լպ. առապա 6.80/7.40

» 100 քիլօ 10.5

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա քեազասընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն ֆրանք իլէ:

ԳԱՀՎԷ 1.96/ 2.20

Շէֆէր նէմցէ 85

Շէֆէր քէսմէլ սանտըզ 43

ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը 42.50

» Ֆիլիպէ » 38/50

» Ինկիլիզ » 32

Բիզօ » 49.

ԿԱՋ Սանտըզ 10 15

Ջէթիլի Եազը քիլօ 1-20/1-30

ԳՈՒՐՈՒ Իւզլիւմ 50

Եուլմուրթա 100 ատէթի 4

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ
ՀԱՅԿԱՎԱՆ երկրորդ անգամ տպագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուլկար-
ներու նիստ ու կացը ու թուրքերէ
կրած առաքանքը անոնց ազատու-
թենէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԻՆԵԼԻԹԻ ՊԱՇԵՐ Պատկեր
մը Տաճկահայաստանի իրական կեան-
քէն: Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմեց
ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ո Ր Ն Ք»-ի խմբագ-
րութեան

ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԷՐՍԱՆՏՐԻԱ

Ճամի քեսպանաի դէն թիւ 18

Տիար Ս. Շէքերեանի վարչութեան
տակ գտնուող այս ծովեզերեայ եւ
օղակտ պանդօղը իր մաքրութեամբ
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-
րօքիլ է մէր հայրենակիցներուն: Այ-
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր
ճաշարան յր արեւելեան եւ եւրոպական
ճաշակով մաքուր եւ համաթամ կերա-
կուրներով: Գիները չափաւոր են:

Одговор редакторъ А. Курбетянъ

печатница Д. Тохоронъ и С-но —Варна